COLUMBIA UNIVERSITY
IN THE CITY OF NEW YORK
INSTITUTE FOR THE STUDY OF HUMAN RIGHTS

Հայտարարություն

Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի նախկին նախագահ

ԴԵՅՎԻԴ ՖԻԼԻՓՍԻ
կողմից

Սույն հայտարարությունը հանդիսանում է պատասխան Թուրքիայի դեսպան Սերդար Կիլիչի 2019թ.-ի հոկտեմբերի 25-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամներին ուղղված նամակին: Դեսպան Կիլիչը կոչ է անում Կոնգրեսին հետաձգել Հայոց ցեղասպանության բանաձևի քվեարկությունը և դրա փոխարեն ստեղծել Հայոց ցեղասպանություն ուսումնասիրող հանձնաժողով:

Ես ծառայել եմ որպես Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (TARC – Turkish-Armenian Reconciliation Commission) նախագահ, որը գործում էր 1999-2003 թվականներին: Ես նաև հեղինակել եմ 2009թ.-ի Թուրքիա-Հայաստան դիվանագիտական պատմությունն արձանագրություններում գիրքը՝ միտված Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը:

TARC-ն ընդգրկում էր քաղաքացիական հասարակության նշանավոր ներկայացուցիչներ Թուրքիայից և Հայաստանից: Այն նպատակ ուներ խթանել հարաբերությունների կարգավորման և հաշտեցման երկխոսությունը՝ հիմք ընդունելով այն, որ Թուրքիան կճանաչեր, թե 1915թ.-ի իրադարձությունները իրենցից ներկայացրել են ցեղասպանություն: ԱՄՆ կառավարությունը և եվրոպական հինգ կառավարություններ հովանավորեցին TARC-ի գործունեությունը: Թուրքիայի և Հայաստանի կառավարությունները տեղեկացվում էին երկխոսության ընթացքում:

Թուրքիան անկեղծ չի եղել երկխոսության կամ հարաբերությունների կարգավորման հարցերում: Թուրքիան անդամակցեց TARC-ին, որը հետամուտ էր լինում իրավական

եզրակացություն ստանալ առ այն, որ իրադարձությունները համապատասխանում էին ցեղասպանության սահմանմանը: Թուրքիան պատասխանատու է Արձանագրությունները խախտելու և իր սեփական պատմության անկեղծ ուսումնասիրությունից խուսափելու համար: Դա հետևանք է ոչ ժողովրդավարական կառավարության Թուրքիայում, որն երկխոսությանը վերաբերվում է որպես իր ժխտողական քաղաքականության ևս մեկ ռազմավարության:

Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի կողմից խորհուրդ տրված եզրակացությունն ամփոփում է, որ իրադարձությունները կարող են բնութագրվել որպես ցեղասպանություն, քանի որ դրանք բավարարում են ցեղասպանության նվազագույն սահմանմանը. I) մահացել է մեկից ավելի մարդ (ii) Նրանք, ովքեր մահացել են, ներկայացնում էին առանձին էթնիկական, մշակութային կամ կրոնական խումբ (iii) Նրանց մահվան հանգեցրած դեպքերն ունեցել են նույն սկզբունքը (iv) Հանցագործները գիտեին, որ հայերը կմեռնեին և, հետևաբար, ունեին անհրաժեշտ ցեղասպան մտադրություն:
https://www.armenian-genociation.org/Affirmation.244/current_categ.5/affirmation_detail.html

Ցեղասպանության եզրակացությունը հաստատվեց «Էլի Ուիզել» հիմնադրամի և բազմաթիվ Նոբելյան դափնեկիրների կողմից:

Թուրքիան առաջարկեց բացել իր արխիվները: Առաջարկը պարզամիտ չէր: Օսմանյան արխիվները մաքրվել են մեղադրական նյութերից:

Թուրքիան, չնայած իր առարկությունների, պատասխանում է միայն ճնշումների ներքո:

Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգների և Թուրքիայի երկկողմ համագործակցության, դեսպան Կիլիչը չափազանցնում է Թուրքիայի համագործակցությունը ԱՄՆ-ի հետ: Այսօր առկա են օրեցօր ավելացող ապացույցներ այն մասին, որ Թուրքիան աջակցել է ԻԼԻՊ-ին և պաշտպանել է իր հիմնադիր ու ղեկավար Աբու Բաքր ալ-Բաղդադիին:

Դեսպան Կիլիչը խաբեբայական փաստարկ է օգտագործում ՆԱՏՕ-ի համար Թուրքիայի կարևորության վերաբերյալ: Փաստորեն, Էրդողանի օրոք Թուրքիան

իսլամիստական, հակաժողովրդավարական և մարդու իրավունքների նկատմամբ թշնամական պետություն է: Այն խախտում է ՆԱՏՕ-ի արձանագրությունները՝ սերտորեն համագործակցելով Ռուսաստանի հետ՝ ռուսական S-400 ցամաք-օդ դասի հրթիռներ ձեռք բերելու միջոցով: Հետախուզական մտահոգությունների հիման վրա դադարեցվել է Թուրքիայի մասնակցությունը F-35 անտեսանելի կործանիչ ծրագրին:

ՆԱՏՕ-ն ավելին է, քան անվտանգության դաշինք: Այն ընդհանուր արժեքներ ունեցող երկրների կոալիցիա է: Եթե Թուրքիան այսօր դիմեր անդամակցելու ՆԱՏՕ-ին, ապա իր դիմումը կհայտնվեր աղբամանում:

Թուրքերի և հայերի միջև իրական հաշտեցումը պահանջում է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչում: Ես ուժգին հորդորում եմ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամներին աջակցել H. R. 296-ին:

/*ստորագրություն*/

Մարդու իրավունքների հետազոտության ինստիտուտի
Խաղաղության հաստատման և իրավունքների ծրագրի տնօրեն
Բարձրաձայնելով անցյալի մասին. Թուրք Հայկական արձանագրություններ, դիվանագիտական պատմություն գրքի հեղինակ